

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի <<Դալարիկի Հ. Հովհաննիսյանի անվան հ1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղի համար: Վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝  
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև1/:

2. Բարձրագույն կրթության փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը:

4. Ինքնակենսագրություն / Ձև 4/

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/:

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 02.10.2020 թ. ներառյալ, ամեն աշխատանքային օր ժամը 10:00-ից 14:00:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 06.10.2020 թ, Արմավիրի մարզի Դալարիկի Հ.

Հովհաննիսյանի անվան հ1 միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ Արմավիրի մարզ, գյուղ Դալարիկ

Տեղեկությունների համար զանգահարել 093-92-83-62 հեռախոսահամարով: